ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՄԱՐՏԻ 2019 թվականի N 22-Ա

ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 5-ի N 70-Ա որոշումը և Լեռնանիստ համայնքի դրամական օգնություն տրամադրող հանձնաժողովի 2019 թվականի մարտի 22-ի թիվ 2 արձանագրությունը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ներքոհիշյալ սոցիալապես անապահով բնակիչներին տրամադրել դրամական օգնություն, համաձայն N 1 հավելվածի:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2019 թ. մարտի 25
գ.Լեռնանիստ

Հավելված 1
Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ղեկավարի
2019 թվականի մարտի 25-ի N 22-Ա որոշման

նո	Անուն, ազգանուն, հայրանուն	Հասցեն	Գումարի չափը /հհ դրամ/
1.	Սարգսյան Միհրան Անուշավանի	Գ. Լեռնանիստ	10.000 դրամ
2.	Ավագյան Անահիտ Հարությունի	Գ. Լեռնանիստ	10,000 դրամ
3.	Զոհրաբյան Աստղիկ Շավարշի	Գ. Լեռնանիստ	10,000 դրամ
4.	Գրիգորյան Քրիստինե Դրաստամատի	Գ. Լեռնանիստ	10,000 դրամ
5.	Խաչատրյան Վալյա Հմայակի	Գ. Լեռնանիստ	10,000 դրամ
6.	Սարգսյան Արսեն Աղասու	Գ. Լեռնանիստ	10,000 դրամ
7.	Հարությունյան Աստղիկ Հայրազատի	Գ. Լեռնանիստ	10,000 դրամ
8.	Հակոբյան Վաչագան Աղվանի	Գ. Լեռնանիստ	20,000 դրամ
9.	Ասատրյան Ասատուր Կարապետի	Գ. Լեռնանիստ	10,000 դրամ
10.	Գրիգորյան Անի Գնելի	Գ. Լեռնանիստ	20,000 դրամ
11.	Ստեփանյան Վազգեն Գերասիմի	Գ. Լեռնանիստ	10,000 դրամ
12.	Բաղդասարյան Սեդա Վիրաբի	Գ. Լեռնանիստ	10,000 դրամ
13.	Բարեղամյան Գեղամ Ռուբենի	Գ. Լեռնանիստ	10,000 դրամ
14.	Խաչատրյան Անուշ Մնացականի	Գ. Լեռնանիստ	20,000 դրամ
15.	Բաղդասարյան Կարեն Լևոնի	Գ. Լեռնանիստ	20,000 դրամ
16.	Մարտիրոսյան Լիդա Գյուրջու	Գ. Լեռնանիստ	10,000 դրամ

Ընդամենը՝ 200.000 / երկու հարյուր հազար / դրամ

Լեռնանիստ համայնքի ղեկավար՝ Ա.Հայրապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ապրիլի 2019 թվականի N 23-Ա

ԲԱԽՇԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԳԱԳԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԵՎ ՎԱԼՅԱ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Բախշիկ, Գագիկ Գրիգորյանների և Վալյա Հակոբյանի դիմումը և ղեկավարվելով <<Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին>> 2002 թվականի դեկտեմբերի 25-ի Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի պահանջներով, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Բախշիկ, Գագիկ Գրիգորյաններին և Վալյա Հակոբյանին հատկացված հողամասերից կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված և նրանց կողմից փաստացի օգտագործվող գյուղատնտեսական նշանակության վարելահողերը նախատեսված չեն այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, այն ընդգրկված չեն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, չեն ընդգրկված ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության, ինչպես նաև հնագիտական, պատմամշակույթային հողերի պահպանման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմաներին, չեն սահմանափակում այլ անձանց իրավունքները, չեն առաջացնում սերվիտուտ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ճանաչել Բախշիկ, Գագիկ Գրիգորյանների և Վալյա Հակոբյանի սեփականության իրավունքները ըստ կադաստրային քարտեզագրման արդյունքի, նրանց կողմից փաստացի օգտագործվող հետևյալ գյուղատնտեսական նշանակության վարելահողերի նկատմամբ՝ կադաստրային 07-033-0211-0021 ծածկագրով 0.1838 հա մակերեսով, կադաստրային 07-033-0305-0003 ծածկագրով 1.374577 հա մակերեսով, կադաստրային 07-033-0211-0033 ծածկագրով 0.294647 հա մակերեսով, կադաստրային 07-033-0212-0007 ծածկագրով 0.17723 հա մակերեսով, որոնք փաստացի օգտագործվել են նրանց կողմից մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

2. Հողամասերի սահմանները որոշվում են <<ԳԵՈԼԵՆԴ>> ՍՊԸ-ի կողմից չափագրված և Լեռնանիստ համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասերի հատակագծերով:
3.Առաջարկել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ՝ Բախշիկ, Գագիկ Գրիգորյանների և Վալյա Հակոբյանի սեփականության իրավունքներն ամրագրված հողամասերի նկատմամբ ու տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
4.Որոշման կատարման կազմակերպումը ու պատասխանատվությունը վերապահել Լեռնանիստի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Հովհաննես Մարգարյան ին:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

20 19թ. Ապրիլ 1
Լեռնանիստ համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ապրիլի 2019 թվականի N 24-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Բախշիկ, Գագիկ Գրիգորյանների և Վալյա Հակոբյանի 2019 թվականի մարտի 29-ի դիմումը, որով ցանկություն են հայտնել իրենց պատկանող Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության վարելահողում ինքնակամ կառուցված այգետնակը օրինականացնել (հիմք՝ <<ԳԵՈԼԵՆԴ>> ՍՊԸ-ի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և <<ԳԵՈԼԵՆԴ>> ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Բախշիկ, Գագիկ Գրիգորյաններին և Վալյա Հակոբյանին պատկանող Լեռնանիստ համայնքի վարչական տարածքում գտնվող 0.1838 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողում /կադաստրային ծածկագիր՝ 07-033-0211-0021/ ինքնակամ կառուցել են այգետնակ 26.02 քառ.մետր արտաքին մակերեսով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ,10-թդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ կետերի պահանջներով, հաշվի առնելով այն, որ համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 11-ի «Քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերի վրա բնակելի, հասարակական, արտադրական նշանակության շենքերի ու շինությունների կառուցումը սահմանափակելու մասին» N 498 որոշման 2-րդ կետի «բ» ենթակետով և 4-րդ կետով սահմանված պայմաններին և հաշվի առնելով այն, որ Բախշիկ, Գագիկ Գրիգորյաններին և Վալյա Հակոբյանին պատկանող Լեռնանիստ համայնքի վարչական տարածքում գտնվող 0.1838 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողում ինքնակամ կառուցված շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չէ առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Բախշիկ, Գագիկ Գրիգորյաններին և Վալյա Հակոբյանին պատկանող Լեռնանիստ համայնքի վարչական տարածքում գտնվող 0.1838 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողում /կադաստրային ծածկագիր՝ 07-033-0211-0021/ ինքնակամ կառուցված այգետնակը համարել օրինական:

2. Սահմանել, որ հողամասի սեփականատերերը.
1) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Լեռնանիստ համայնքի բյուջեի N 900125008202 հաշվին պետք է վճարեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 14 311 (տասնչորս հազար երեք հարյուր տասնմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.
2) իրենց միջոցների հաշվին պետք է վճարեն կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:
3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2019 թ. ապրիլի 1
Լեռնանիստ համայնք